

С 32-1  
А 185

# ԲԱՆԶԱՐԱՆՈՑՆԵՐԸ ԿՈՒՆՈԶՆԵՐՈՒՄ



ԱՆՆ ԺՈՂՈՎ ՌԵՐԿՆ. ԿԵՆՏՐ. ՇՐԱՏԱՐԱԿԶ. ՄՈՍԿՎԱ, 1931

635  
4-78

ВНЕШКОТОВА  
ИНСТИТУТ  
ВНЕШНЕГО  
ЭКОНОМИЧЕСКОГО  
СВЯЗЕЙ

24 SEP 2010

635

4-78

Ա. ԿՈՐՈՍԵԼՅՈՎ

# ԲԱՆՋԱՐԱՆՈՑՆԵՐԸ ԿՈԼԽՈՋՆԵՐՈՒՄ

ՆԿԱՐԱԶՍՐԴ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1931

ՄԱՅՆՈՒՅԻՆ  
ԻՆՏԻՏՄԿԱ  
ԻՍՏՈՐԻԱԿԱՆ  
ԲԱԿՈՒՄՈՒ ԿԱՅԻ  
ՍՍՏՐ

ԻՆՉ ԵՆ ՏԱԼԻՍ ԲԱՆՋԱՐԱՆՈՑՆԵՐԸ ԿՈԼԽՈՉՆԵՐԻՆ

Մեր կառավարութիւնը վորոշել է կրկնապատկել բանջարանոցներին հատկացված վարելահողը: Պետք է կրկնապատկել նաև բանջարեղենների բերքը:

Հյուսիսում ապրող գյուղացիները ճաշի չեն նստում, յեթե կաղամբով պատրաստած շի (ՍՊ) չկա, իսկ հարավային գյուղացիները՝ յեթե բորշշ չկա սեղանի վրա: Բայց բանջարանոցներ ունենալու մասին գյուղացիները շատ ել հոգ չեն սանում:

Մեզանում գյուղացիները կարծում են, վոր միան է մարդուս ուժ տվողը, իսկ բանջարեղենները—ի միջի այլոց, շոայլության նման մի բան էն: Բայց այսպես մտածում են միայն նրանք, ովքեր չգիտեն, թե ինչ է ասում գիտութիւնը սննդառության մասին:

Գիտնականները պարզել են, վոր յեթե մարդը բացի մոխր, սննդի համար գործադրե նաև բանջարեղեններ, նա առողջ կլինի և կարող է լավ աշխատել: Իսկ յեթե միայն միս և հաց ուտե, — առողջ չի կարող լինել:

Շատ բանջարեղեններ, մանավանդ սիսեռը և լոբին, իրենց կշտացնելու հատկությամբ մոխր յետ չեն մնում:

Կոլխոզներում բանջարանոցներ ունենալը շահավետ է և այլ պատճառով:

Շատ կոլխոզներում կան մարդիկ, վորոնք չեն պարագում աշխատանքով: և 17 տարեկանից պակաս գեռա-

Թարգմ. Ն. Տ.-ԻՐ.




60739 - 67

հասները համարվում են աշխատանքի անընդունակ: Դաշտում նրանց համար դժվար է գործ գտնելը:

Բանջարանոցների ծավալումը աշխատանք կտած երեքին և դեռահասներին:

Բանջարանոցներում կան շատ աշխատանքներ, վորոնք կարող են կատարվել նույն իսկ յերեխաների ձեռքով: Որինակ, մարզերի նոսրացումը և ձեռքով քաղհան անելը, տնկեր անեցնելը և նրանց խնամելը և այլ աշխատանքներ:



Նեոահանների աշխատանքը բանջարանոցում

Բանջարանոցները մեծ բերքեր են տալիս: Որինակ մի հեկտար բանջարանոցից կարելի յե ստանալ 33 տոննա կաղամբ կամ 20 տոննա արմատապտուղներ, այսինքն գազար և ճակնդեղ:

### ԻՆՉՔԱՆ ՇՈՂ ՊԵՏՔ Ե ՀԱՏԿԱՑՆԵԼ ԲԱՆՋԱՐԱՆՈՑՆԵՐԻՆ

Փորձված բոստանչիները հերկում են բանջարանոցային հողը և պարարտացնում են աղբով աշունքից, այս

պատճառով ել բանջարանոցին հող են հատկացնում ամառվա վերջից:

Վորջան շատ հող լինի բանջարանոցի համար, այնքան լավ: Մեր հանրապետության մեջ ներկայումս բանջարեղենների պահաս է զգացվում: Հատկացնելով բանջարանոցներին մեծ հողամասեր, կոլխոզները կնպաստեն աշխատավորության սննդին:

Ինչքան հող պիտի հատկացնել բանջարանոցին կալխոզում: Այդ բանը դժվար չե պարզել: Փորձից հայտնի յե, թե տարեկան ինչքան բանջարեղեն է պահանջվում մի ուսողի համար: Գլխավոր բանջարեղեններն են, կարտոֆել, կաղամբ, գազար, ճակնդեղ, բողկ, վարունգ, պոմիդոր, սոխ:

100 ուսող ունեցող կոլխոզում պետք է մեկ ու կես հեկտար կարտոֆել ցանել: Կաղամբի համար — հեկտարի մի յերբորդ մասը: Գազար, բողկ և ճակնդեղ միասին պիտի ցանել կես հեկտար: Վարունգ և պոմիդոր — մի ութերորդ հեկտար: Սոխ —  $\frac{1}{12}$ -րդ հեկտար: Մի բան ել պետք է ավելացնել յերեխաների համար: Բանջարեղենների ավելցուկը պիտի ծախել կոոպերացիային:

### ԿԱՐԵԼԻ՞ ՑԵ ԱՄԵՆ ՏԵՂ ԲԱՆՋԱՐԱՆՈՑ ՈՒՆԵՆԱԼ

Բանջարանոցներ կարելի յե տնկել ԽՍՀ Միության բոլոր ուայոններում, վորտեղ հաց է ցանվում: Մարդը այնպես է հարմարեցրել մի ջանի բանջարեղեններ, վոր նրանք կարող են աճել և՛ հյուսիսում, և՛ հարավում:

Որինակ ամենակարևոր բանջարեղենը — կաղամբը — լավ բերք է տալիս և հյուսիսում և՛ հարավում:

Հարկավոր է միայն ամեն մի ուայոնի համար ընտրել պատշաճ տեսակը:

Բանջարանոց կարելի յե տնկել ամեն տեսակ հողի վրա: Յեթե նույնիսկ հողը շատ վատ է,

կարելի չե լավացնել այն՝ պարարտանյութեր և այլ հող  
ավելացնելով: Իրա համար հարկավոր ե խորհրդակցել  
տեղական գյուղատնտեսի հետ:

Բանջարանոցի համար չպետք ե ջանքեր խնայել:  
Բանջարանոցի համար շատ հող չի պահանջվում, իսկ մեծ  
բերք ե տալիս նա:

Բանջարանոցների համար լավագույնը համարվում ե  
սև հողը: Սև հողի վրա բոլոր բանջարեղենները լավ բերք  
են տալիս և քիչ պարարտանյութ են պահանջում:


Ավագոտ հողերը հեշտությամբ են մշակվում, բայց  
պահանջում են պարարտացումն: Այդ հողերը կարելի չե  
պարարտացնել աղբով, տորֆով: Լավ կլինի, յեթե ավե-  
լացնենք կավ: Կավի շնորհիվ՝ ավագոտ հողը ավելի լավ ե  
պահում անձրևային և ձյան ջուրը:

Ավագոտ և կավային հողերը նույնպես պետք են  
գալիս բանջարանոցների համար: Նրանց կարելի չե պարարտացնել աղբով:

Կավային հողերը դժվարությամբ են մշակվում:  
Գարնանը նրանք լավ չեն տաքանում: Բայց կավային  
հողերը կարելի չե լավացնել, ավելացնելով նրանց ավազ  
և կիր, իսկ ավելի լավ ե ավելցնել տորֆ և մոխիր:

Հարավում բանջարանոցների համար առանձնապես լավ  
են սղմոտ հողերը: Նրանք գտնվում են գետերի մոտ և  
յերաշտից չեն վնասվում: Այդ տեսակ տեղերում բանջարանոցները շատ քիչ են ջրում: Բարձր տեղերում գտնվող  
բանջարանոցները հաճախ պետք ե ջրել:

Ճահճոտ և տորֆով ծածկված հողերը հարկավոր ե  
չորացնել, այլապես նրանց վրա չի կարելի բանջարանոց  
չինել: Բանջարեղենները չեն սիրում, վոր հողի մեջ շատ  
ջուր կլինի:



Նկ. 2. Տուֆերի տեղափոխումը բանջարանոց:

Ճահճոտ հողերը լավացնում են, ավելացնելով նրանց կիր և կավ: Մանավանդ հարկավոր է կիրը, առանց վորի ճահճոտ հողի վրա բանջարեղենները լավ չեն բանում:



Նկ. 3. Կանանց աշխատանքը՝ բանջարանոցում: Ջրում են բանջարանոցը:

### ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒՅՑՈՒՆԸ

Բանջարանոցի համար տեղ պետք է ընտրել ջրի մոտ: Ամառը բանջարանոցը հաճախ պիտի ջրել: Յեթե բանջարանոցը շինվի, որինակ լճակի մոտ, ջրելը հեշտ կլինի:

Մայրահեղ դեպքում յեթե կոլխոզի ռայոնում վոչ գետ կա և վոչ ել լճակ, բանջարանոցը ջրում են ջրհորի ջրով: Իսկ ընդհանրապես բանջարանոցը ջրհորի կամ ջրանցքի ջրով չպետք է ջրել, — հարկավոր է գետի կամ լճակի ջուր:


Բուլղարները, վոր փորձված բոստանչիներ են, շինում են մի հասարակ մեքենա, վորով դուրս են քաշում ջուրը ջրհորներից, գետերից և լճակներից: Այդ մեքենան կոչվում է չիգիր:

### ՉԻԳԻՐ՝ ԲԱՆՋԱՐԱՆՈՑՆԵՐԸ ՋՐԵԼՈՒ ՇԱՄԱՐ

Չիգիրը հեշտ է շինել: Ջրհորի վրա շինում են մի մեծ փայտյա անիվ, հաղցնում են նրա վրա շրջակապ թուկ: Թուկից կապում են փայտե դուլեր: Յերբ անիվը պտտում է, դուլերը լցվում են ջրով:

Վերև բարձրացրած դուլերից ջուրը թափվում է փայտե արկղի մեջ, վորտեղից փայտե խողովակով վազում է առուների մեջ, իսկ այստեղից — բանջարանոցը:

Անիվի մոտ դնում են փայտի ժանանիվ (шестерня), վորը ունի գլանանիվ (վորրակ, вал): Այդ գլանանիվի մեջ մտցնում են լծի ծայրը, վորին լծում են ձին: Չիգիրի բոլոր մասերը շինում են փայտից: Չիգիրի շինութունը շատ թանգ չարժի:



Նկ. 4. Չիգիր — բոստանները ջրելու համար:

Ամենից լավ է շինել բանջարանոցը այնպիսի տեղում, վորը ցածր է ջրից, որինակ՝ ցածր է լճակից: Այդ դեպքում ջուրը կարելի չէ բաց թողնել բանջարանոցը և նա ինքը կհոսի առուներով:

Բանջարանոցների համար ամենալավը հարթ կամ շատ քիչ դարիվար հողամասն է:

Թեք գառիվայրերը բանջարանոցների համար անպետք են:

Յերբեմն հարկադրված բանջարանոցները շինում են գառիվայր հողամասերում: Այսպիսի դեպքերում հարավում բանջարանոցը այնպես պիտի շինել, վոր նա նայի դեպի հյուսիս կամ արևմուտք: Հարավում այդ գառիվայրերի վրա աճող բույսերը ավելի քիչ են վնասվում յերաշտից:

Հյուսիսում բույսերը կարիք ունեն արևի շերմությանն ու լույսին: Այստեղ բանջարանոցի գառիվայրը պիտի նայի դեպի հարավ կամ հարավ-արևմուտք: Բանջարանոցի գառիվայրը չպետք է դարձած լինի դեպի արևելք վոչ հարավում և վոչ էլ հյուսիսում: Այդ տեսակ բանջարանոցներում բույսերը սաստիկ վնասվում են առաջին ցրտերից:

Յերբեմն ստիպված բանջարանոցի համար տեղ են ընտրում գառիվայրի վրա: Այդ տեսակ տեղում մարգերը պիտի շինել գառիվայրի լայնությամբ, այլ վոչ նրա ուղղությամբ: Լայնությամբ շինված մարգերը պահում են բանջարանոցի վրա անձրևի ջուրը: Այդ կանոնը մանավանդ հարկավոր է չմոռանալ չոր վայրերում:

### ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ ՀՈՂ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Բանջարանոցային բույսերը լավ աճելու համար պահանջում են լավ, խնամքով մշակված հող:

Բանջարանոցային հողը հարկավոր է հերկել աշնանից: Հերկած հողը ձմեռը պետք է թողնել չտափանված շերտերով: Հողը սառչում և դառնում է փխրուն, իսկ սառնամանիքները սպանում են նրա մեջ գտնվող վնասակար միջատների սաղմերը: Հերկած հողի շերտերը շատ ձյուն են պահում իրենց մեջ: Նշանակում է, վոր հողը գարնանը յերկար ժամանակ թաց է մնալու:

Գարնանը բանջարանոցը պետք է տափանել: Այդ պետք է անել վորքան կարելի յե վաղ: Վաղ տափանելուց հողի մեջ շատ ջուր է մնում:

Մերմերը ցանելուց կամ տնկելուց մի յերկու որ առաջ բանջարանոցը հարկավոր է մի անգամ էլ հերկել: Հերկելուց հետո պետք է տափանել: Յեվ միայն դրանից հետո կարելի յե շինել մարգերը:

Մարգերը կարելի յե շինել ձեռքով, թիյերի ոգնությամբ: Ավելի արագ և աժան է նստում, յեթե մարգերը կարտվեն միաձի գութանով:

Չոր վայրերում հարկավոր չե մարգեր շինել, այլ հարկավոր է միայն թողնել շավիղներ ցանված բույսերի շարքերի մեջ: Խիստ չոր տեղերում, հարավում, հարկավոր են խորացրած մարգեր: Այդ մարգերը նմանվելու յեն լայն առուների:

Իսկ ընդհակառակն, հյուսիսային ռայոններում հարկավոր է բարձր մարգեր շինել — 18-ից մինչև 27 սանտիմետր բարձրությամբ, այսինքն 4—6 վերջով:

Պետք է հիշել, վոր մարգերի վրա հողը ավելի լավ է տաքանում, բայց ավելի շուտ է չորանում:

Մարգերի միջին լայնությունը պիտի լինի մի մետր (մեկ ու կես արշին): Մարգերի մեջ շինում են անցքեր 35 սանտիմետր (կես արշին) լայնությամբ:

Ցածքսից առաջ մարգերի վրայի հողը խնամքով պետք է փափկացնել: Հարկավոր է նաև ջարդել կամ հեռացնել հողի կոշտերը և վոչնչացնել անպետք խոտերի արմատները: Սովորաբար ասում են, բանջարեղենին հարկավոր է վոչ թե հող, այլ բմբուլի անկողին: Այդ դեպքում բանջարանոցը իր շնորհակալությունն է հայտնում մարդուն և տալիս է համեղ, սննդարար բանջարեղեն:

Բանջարանոցի հողը մաքուր և փափկացրած պիտի պահել ամբողջ ժամանակ, քանի բանում են բանջարեղենները:

Մարզերի յերկարութունը պիտի անցնի հարավից դեպի հյուսիս, կամ հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք: Իսկ նրա համար ե, վորպեսզի բոլոր բանջարեղենները համաչափ աճեն:

Յերբ մարզերը ձգված լինին արևելքից դեպի արևմուտք, այդ դեպքում բույսերի շարքերը իրար կստվերակալեն, բանջարեղենները կհասունանան զանազան ժամանակ. վոմանք վաղ, վոմանք ուշ: Բանջարեղեններն ել զանազան սեռակ կստացվեն. մի մասը ավելի խոշոր և համեղ կլինի, իսկ մի մասը՝ ավելի մանր և անհամ:

### ԲԱՆՋԱՐԱՆՈՑԸ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Անհրաժեշտ ե պարարտացնել բանջարանոցը: Փորձված բուստանչիները պարարտացնում են բանջարանոցային հողը նույնիսկ սև հող ունեցող ուսուցիչներում, իսկ սև հող չունեցող շրջաններում անհրաժեշտ ե պարարտացնել բանջարանոցը:

Բանջարանոցների համար ամենալավ պարարտանյութ համարվում ե աղբը: Կավային և ավազոտ հողերը, վոր թեթև են համարվում, պետք ե ծածկել կովի և խոզի աղբով, իսկ ծանր (հողերի համար — կավային, — ավելի լավ ե գործածել ձիու և վոչխարի աղբ: Անբերրի կավային հողի մի հեկտարի համար գործ են ածում մինչև 100 տոննա (600 փութ) աղբ:

Լավ պարարտանյութ ե թռչունների ծեռուր, վորը մանրացնում են և բռնրով թափում են փոսորակների մեջ բույսերը տնկելու ժամանակ:

Թռչունների ծեռուր կարելի յե թափել նաև մարզերի վրա բույսերի տնկելուց հետո, թայց այդ ծեռուր

ցրել կարելի յե միայն այն ժամանակ, յերբ բույսերը կամրանան, վորովհետև հակառակ դեպքում թռչնի ծեռուր այրում ե կանաչը:


Լավ պարարտանյութ ե համարվում աղբի մզվածքը, վոր շատ հեշտությամբ ե պատրաստվում: Վերցնում են սովորական տակառը և մինչև կեսը կամ մի քիչ ավելի խրում են հողի մեջ: Այդ նրա համար են անում, վոր տակառը շուտով չփչանա: Հետո տակառը մինչև կեսը լցնում են կովի թարմ աղբով, վրան ածում են այնքան ջուր, վոր մինչև հասնի տակառի յեզրը: Այնուհետև այդ ջրախառն աղբը որեկան յերկու կամ յերեք անգամ խառնում են:

Յերեք-չորս օրից հետո հայտնվում են պղպղակներ: Իսկ նշանակում ե, վոր աղբային մզվածքը պատրաստ ե:

Այդ մզվածքը գործի գցելուց առաջ պիտի վրան ջուր ածել և խառնել: Մզվածքի մի դուլլին պիտի ավելացնել յերեք դուլլ ջուր: Մզվածքով կարելի յե ջրել միայն լավ ամրապնդած բույսերը և այն ել անձրևից կամ ջուր ցանելուց հետո միայն: Յեթե մզվածքը թափես չոր գետնի վրա, բույսերը կայրվեն:

Շատ լավ պարարտանյութ ե համարվում սովորական վառարանային մոխիրը, վորով մանավանդ լավ կլինի պարարտացնել կարտոֆել և արմատապտուղներ ցանելու համար նշանակված հողը: Մի հեկտար հողին գնում ե մոտ 17 ցենտներ (100 փթի չափ) մոխիր:

Լավ կլինի պարարտացնել հողը նաև փոշիներով, այսինքն արհեստական կամ հանքային պարարտանյութերով: Որինակ ծծմբաթթու ավազածինը (сернокислый аммоний նպաստում ե տերևների, ցողունների և արմատների աճմանը:



Մծմբաթիթու ավշակածնով պարարտացնում են հողը  
 դարնանը, ցանքսից ջիչ առաջ: Մի հեկտար հողին  
 գնում է յերկու և կես ցենտներ (15 փուլթ) ավշակածին:  
 Մյուս «փողիններից» բանջարանոցի համար լավ են սու-  
 պերֆոսֆատը և վոսկորի ալյուրը:

Դրանց թափում են հողի մեջ ցանքսից առաջ, վոս-  
 կորի ալյուրը աշնանը, իսկ սուպերֆոսֆատը՝ ուղիղ  
 ցանքսից առաջ: Մի հեկտար հողի վրա պիտի ածել 4 ցենտ-  
 ներ (24 փուլթ) սուպերֆոսֆատ և 4 ցենտներ վոսկորի ալյուր:

### ԻՆՁՊԵՍ ՎԱՐԵԼ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մի այսպիսի առած կա — «հացի վրա վոր հաց ցանես,  
 վոչ կկալես, վոչ ել կերնես»: Սա վերաբերում է նաև  
 բանջարանոցին: Յեթե կաղամբի վրա կաղամբ ցանես և  
 ճակնդեղի վրա ճակնդեղ, այն ժամանակ հյուսիսում  
 կմնաս առանց շշիի, իսկ հարավում՝ առանց բորշի:  
 Բանջարանոցն ել պիտի ունենա իր ցանքսա-  
 փոխությունը:

Բանջարանոցային ցանքսափոխությունը լինում է  
 յերկդաշտյան, յեռադաշտյան և չորս դաշ-  
 տյան: Ամենից լավը չորսդաշտյան ցանքսափոխու-  
 թյունն է: Սակայն չորսդաշտյան ցանքսափոխությունը  
 ամեն տեղ ել չի կարելի կիրառել: Յեթե հողը աղքատ է,  
 այդ դեպքում պետք է մտցնել յերկդաշտյան ցանքսա-  
 փոխություն:

Յերկդաշտյան ցանքսափոխության դեպ-  
 քում բանջարանոցը պարարտացնում են աղբով յերկու  
 տարին մի անգամ: Այս տեսակ ցանքսափոխություն պիտի  
 լինի այն ուայոններում, վորտեղ հողը աղքատ է և շուտ-  
 շուտ չպարարտանցնելու դեպքում լավ բերք չի տա:

Յեռագաշտյան ցանքսափոխության դեպքում հողը պարարտացնում են յերեք տարին մի անգամ: Այդ ցանքսափոխությունը լավ ե կալվախառն բերրի հողի համար:

Չորսդաշտյան ցանքսափոխության դեպքում հողը պարարտացնում են չորս տարին մի անգամ: Այդ ցանքսափոխությունը կիրառվում ե միայն այն ուայոններում, վորտեղ լավ սեահող կա:



Նկ. 6. Բանջարանոցային չորսդաշտյան ցանքսափոխություն:

Բանջարանոցային վոչ բոլոր բույսերն են սիրում թարմ աղբով պարարտացումն: Յեթե, որինակ, թարմ աղբի վրա ցանենք սիսեռ կամ լոբի, կարող ենք ստանալ միայն ցողուններ և տերևներ. վոչ սիսեռ կտեսներնք և վոչ ել լոբի:

Հողը աղբով պարարտացնելուց հետո առաջին տարին պետք ե ցանել. կաղամբ, կովակաղամբ (брюква), բողկ, սամիթ, դդում, սալաթ, սպանաղ և մադդանոս (петрушка): Բայց մադդանոսը պիտի ցանել վորպես կանաչեղեն, այլ վոչ վորպես արմատապտուղ:

Աղբով պարարտացնելու յերկրորդ տարին կարելի յե ցանել. վարունգ, կարկաժ, պոմիդոր, բաղրջան, կանաչ սոխ, պղպեղ և ծաղկափոր կաղամբ:

Աղբով պարարտացնելու չորրորդ տարին ցանում են. սիսեռ, լոբի, բակլա և կարտոֆել:

Աղբատ հողի վրա յերկդաշտյան ցանքսափոխության դեպքում ցանում են այլ կերպ: Աղբով պարարտացնելու առաջին տարին այստեղ կարելի յե ցանել բացի հիշածներից նաև վարունգ, դդում, ճակնդեղ և կանաչ սոխ:

Յեռագաշտյան ցանքսափոխության դեպքում հողը աղբով պարարտացնելու յերկրորդ տարին կարելի յե ցանել գազար, ճակնդեղ, դլխով սոխ, սխտոր, բողկ, ցիկորիյ և արմատավոր մադդանոս:

Պետք ե խստ հեռեել, վոր յուրաքանչյուր բանջարեղեն ցանվի իր ժամանակին հողը աղբով պարարտացնելուց հետո: Չի կարելի թույլ տալ, վոր բանջարեղենները առաջ անցնեն կամ յետ մեան իրենց հերթից:

60739-67

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՇԻՆՎՈՒՄ ՁԵՐՄՈՑՆԵՐԸ

Բանջարանոցային մի քանի բույսերի հասունանալու համար պահանջվում ե շատ ժամանակ: Հյուսիսում ամառը կարճ ե, չի բավականանում: Այս տեսակ բույսերի սերմերը ցանում են ջերմոցներում վաղ գարնանը, իսկ յերբեմն նաև ձմռանը: Յերբ գալիս ե տաք յեղանակը, հանում են բույսերը ջերմոցներից և անկում են մարգերում: Ջերմոցներում գտնվող ջահել բույսերը կոչվում են տեղափոխվող բույսեր (рассада):

Ջերմոցները լինում են տաք և ցուրտ:


Շուրտ ջերմոց շինելը հեշտ ե: Սովորական մարզը կամ նրա մի մասը շրջապատում են տախտակյա փղբրիկ ցանկապատով, վորը ունենում ե մի մեար (մեկ ու կես արջին) բարձրություն: Գիշերները և ցուրտ ժամանակ այս-



տեսակ ցանկապատած մարդը վերեից ծածկում են խորով կամ ճիլովով: Յուրա ջերմոցները կոչվում են նաև տնկարաններ:

Յուրա ջերմոցներում աճեցնում են կաղամբ, կովա-կաղամբ և սիամի կաղամբ (кольраби):

Տաք ջերմոցներ շինելը ավելի դժվար է: Դրա համար պետք է ընտրել չոր և արևից լավ լուսավոր-վող տեղ:



Նկ. 7. Ջերմոցների խնամքը: Գոմարը են թափում:

Տաք ջերմոցի համար փորում են փոս 2 մետր (3 արշին) լայնությամբ 6 մետրի չափ (10 արշին) յերկարու-թյամբ: Փոսի խորությունը պիտի լինի 71 սանտիմետրից (մի արշին) վոչ պակաս: Հյուսիսում փոսի խորությունը կարելի յե հասցնել մի մետրի (մեկ ու կես արշին): Փոսի յերկարությունն ու լայնությունը կարելի յե պակսեցնել ըստ ցանկության:

Յերբ փոսը պատրաստ է, դա շրջապատում են գե-րանների կտորներով կամ հաստ տախտակներից շինած վանդակով: Վանդակի պատերը շինվում են զանազան բարձրությամբ: Հյուսիսին նայող պատը յերկու անգամ բարձր պիտի լինի հարավին նայողից: Այդ նրա համար է, վերպեսզի բույսերը շատ լույս և ջերմություն ստանան արևից: Նույն նպատակով ջերմոցի փոսի յերկարությունը ձգված է լինում արևելքից արևմուտք: Ջերմոցի այստե-սակ դրույթի դեպքում այնտեղ աճում են լավ բույսեր: Դրսի կողմից ջերմոցի վանդակը հարկավոր է մինչև վերը ծածկել հողով, փորի շնորհիվ ջերմոցում ջերմությունը ավելի լավ է պահպանվում:

Ջերմոցը պետք է նախապատրաստել բանջարանոցա-յին սերմերի ցանքսի համար: Այսպես են անում: Ցանքսից 10 կամ 12 որ առաջ ջերմոցները մինչև վերը լցնում են լավ շայրված աղբով: Աղբը փխրուն դրությամբ են լցնում:


Դրանից յերկու կամ յերեք որ անցած աղբը նստում է և սկսում է տաքանալ: Այդ ժամանակ հարկավոր է լավ կոխկռակ աղբը:

Այնուհետև աղբի վրա ածում են փխրուն հող: Հողի շերտի հաստությունը պիտի լինի 14—18 սան-տիմետր (3—4 վերշոկ): Ջերմոցը պատրաստ է: Դա ծած-կում են ապակեպատ փայտյա շրջանակով:

Ջերմոցները պետք է լցնել ձիու աղբով: Կովի աղբից ջերմոցում առաջանում են բույսերի համար վնասակար սունկեր: Յեթե սունկերը արդեն կան, հարկավոր է վոչն-չացնել նրանց, հանել ու դեն շարտել, իսկ գոյացած փո-սերը ծածկել մոխիրով:

Ջերմոցին հարկավոր է միայն ձիու թարմ աղբ, փորը պետք է ջերմոցում այրվի և տաքություն տա: Հենց այս նպատակով էլ դնում են աղբը ջերմոցներում: Վերպեսզի

Նկ. 8. Եկեղեցական արձանագրության շերտեր:



ձիյու աղբը իսպառ չայրվի ժամանակից առաջ, դարսում են փոքրիկ կույտերով: Բայց կարելի չե՛ աղբը պահել մի մեծ կույտով: Այդ դեպքում աղբակույտը պետք է լավ կոխկռտել այնպես, վոր ողը չկարողանա անցնել նրա մեջ: Աղբը ջերմոցը լցնելուց առաջ պետք է փերուռն դարձնել:

### ՅԱՆՔԱԸ ՁԵՐՄՈՑՈՒՄ

Տեղափոխելու համար աճեցնում են հետևյալ բանջարեղենները. հասարակ և ծաղկավոր կաղամբը, կովակաղամբը, սիամի կաղամբը բաղրջանը, պոմիդորը, կարմիր պղպեղը և կանաչ սոխը:

Այդ բանջարեղենների բույսերը ժամանակին ունենալու համար հարկավոր է ցանել նրանց սերմերը ջերմոցներում: Այդ պետք է անել տաք որերը մեկ և նույնիսկ յերկու ամիս հասնելուց առաջ:

Պղպեղը, պոմիդորը և կանաչ սոխը կարելի չե՛ ցանել ջերմոցներում մարտի սկզբին:

Ջերմոցներում սերմերը աճաի ցանել շաբթերով:

Շաբթավոր ցանքսի համար ջերմոցներում անց են կացնում փոքրիկ ախոսներ 2 սանտիմետր (կես վերշոկ) խորությամբ: Ակոսիկների միջի տարածությունը պիտի լինի 7 սանտիմետր (մեկ ու կես վերշոկ): Այդ ախոսիկների մեջ ցանում են սերմերը:

Ցանած սերմերը պիտի ծածկել հողով: Լավ բոստանչիները լցնում են բանջարանոցային հողով մաղը և հետո մաղում են հողը ախոսիկների վրա:

Ցանքը ջերմոցներում անպատճառ պետք է ջրել: Ջրելու համար հարկավոր է գործածել գոլ շուր, վորի ջերմությունը հավասար լինի նոր կթած կաթի ջերմությանը: Ջուրը զգուշությամբ լցնում են մանր ցանցով պատած ցնցուղից: Անզգուշ ջրելով կարելի չե՛ սերմերը կուտակել իրար վրա:

## ԲՈՒՅՍԵՐԻ ԽՆԱՍՔԸ

Ջերմոցներում յերևացող ծիլերին պետք է խնամքով հետևել: Բայց դա դժվար բան չէ: Այդ կարող են մեծ հաշտություններ անել ծերերն ու դեռահասները:

Ծիլերը Ջերմոցներում ամեն որ պետք է երանանել, այսինքն քամուկն տալ: Այդ պետք է անել որվա ամենատաք ժամանակը: Բացում են շրջանակը քամու հակառակ կողմից, վորպեսզի քամին չփչի Ջերմոցի մեջ: Ցուրտ որերին շրջանակը միայն պետք է բանալ և իսկույն ծածկել:

Յերբ հողը Ջերմոցում կսկսի չորանալ, հարկավոր է ջրել գոլ ջրով: Բայց հաճախ ջրելը վնասակար է: Դրանից Ջերմոցներում խոնավություն է առաջ գալիս:


Յերբ Ջերմոցային ծիլերը կհանեն մեկ կամ յերկու իսկական տերևներ, նրանց պետք է հեռացնել իրարուց: Հարկավոր է տեղափոխել 9—13 սանտիմետր (2—3 վերջուկ) մեկ-մեկուց հեռու:

Տեղափոխությունից առաջ շահել բույսերի արմատները մի քիչ պետք է կտրել: Դրանից բույսերի արմատները ավելի լավ են զարգանում և դառնում են ամուր և ուժեղ:

Այնուհետև բույսը նորից տեղափոխում են Ջերմոցը: Յերբեմն դա տնկում են ցուրտ Ջերմոցում և այնտեղից ուղղակի բանջարանոցում: Այդ դեպքում հարմարվում են յեղանակին:

Բայց լավ կլինի, յեթե մարզերը տեղափոխելուց առաջ բույսերն ընտելանան ազատ ողին: Այդ պետք է սկսել բանջարանոցը տեղափոխելուց յերկու շաբաթ առաջ:

Սկզբում Ջերմոցներից հանում են շրջանակները միայն ցերեկը: Մի քիչ անց հանում են շրջանակները



Նկ. 9. Տունկելի պրիստանտումը:

նաև գիշերը, յեթե միայն ցուրտ յեղանակ չի սպասվում: Մարգերը տեղափոխելուց մի քանի օր առաջ շերմոցները ամբողջ օրը բաց են մնում:

Շատ ել չպետք է շտապել բույսերը բանջարանոց տեղափոխել: Ավելի լավ է յերկու-յերեք օր ել սպասել:

Ջերմոցների մեջ բույսերը ավելի շատ պետք է լինեն, քան պահանջվում է մարգերը տեղափոխելու համար: Յերբեմն, չնայած բոլոր զգուշավոր միջոցներին, տեխափոխած բույսերի մի մասը վնասվում է ցրտից, կամ չորանում է արևի տակ: Յերբեմն բույսերի մի մասը չի ծաղկում, վորովհետև լավ չեն տեղափոխել և վերատնկել: Բույսերի պաշար ունենալով շերմոցներում, կարելի չի հուսալ, վոր բանջարանոցների մարգերը դատարկ չեն մնա:

Բաց մարգերի մեջ ամենից առաջ տեղափոխում են կաղամբը: Կաղամբը կարելի չի տեղափոխել արդեն այն ժամանակ, յերբ սկսում է հացի վաղ գարնանացանը:

Բույսերը հանելուց յերկու ժամ առաջ շերմոցի հողը առատորեն պետք է ջրել: Դրանից հողը փափկում է և կպչում է բույսի արմատներին: Բույսը պետք է դուրս բերել հողի հետ միասին զգուշութամբ: Փոքրիկ արմատները կտրելը վնասակար է:

Բույսերի տեղափոխությունը մարգերի մեջ պետք է կատարել յերեկոյան դեմ կամ ամպամած յեղանակով: Յեթե հարկավոր է լինում տնկել արևոտ ժամանակ, այդ դեպքում տեղափոխվող բույսը պիտի վարագուրել հարդով, խոտով կամ տերևներով ծածկված բարակ ճյուղերով:

Տեղափոխությունը կատարում են այսպես: Մարգում, առաջուց նշանակված տեղը խրում են հողի մեջ ցից, չետո հանում են ցիցը և ստացված փոսի մեջ տնկում են շահել բույսը:

Մարգի մեջ բույսը պիտի տնկել յերկու սանտիմետր ավելի խոր, քան շերմոցում: Բույսի արմատները փոսի մեջ պետք է լավ ուղղել: Վորովից կամ ճմլված արմատները կարող են փլթել և բույսը այսպիսով կվնասվանա:



Նկ. 10. Բանջարեղենների տնկումը բոստանում:

Ցյի փոխարեն փոսը փորելու համար ավելի հարմարեզործածել փայտյա փոքրիկ թի, վորով ավելի հեշտ է լայն փոս շինել, քան ցցով, իսկ լայն փոսի մեջ ավելի լավ կարելի չի ուղղել բույսի արմատները: Վերատնկելուց հետո հարկավոր է տնկած բույսի շուրջը հողը պինդ ճմլել: Ճմլել հարկավոր է ձեռքով, այլ վոչ թե կոշիկով, ինչպես անում են գյուղացիներից վոմանք: Տեղափոխված բույսը իսկույն պետք է ջրել:

**ՍԵՐՍԵՐԻ ՑԱՆՔԱԸ ԲԱՆՋԱՐԱՆՈՅՈՒՄ**

Բանջարանոցային շատ սերմեր ցանվում են ուղղակի բանջարանոցում: Միսեռի, մաղղանոսի և գազարի սերմերը կարելի չի ցանել շատ վաղ, հենց վոր հողը չորանա: Գազարի, մաղղանոսի և սիսեռի բողբոջները առավոտյան

ցրտերից չեն վախենում: Բացի դրանից, այդ բույսերի սերմերը յերկար ժամանակ են պահպանվում ծլելու համար: Յեթե պատահում ե, վոր բանջարանոցը ուշ են ցանում, այն ժամանակ այդպես յերկար ծլող սերմերը թրջում են կամ ուղղակի ծլեցնում են ջրի մեջ: Դրանով նրանք ավելի շուտ են ծլում:

Թրջում են այս ձևով. սերմերը կապում են շորի կտորի մեջ և կես որով դցում են ջրի մեջ, այնուհետև հանում են ջրից և բարակ շերտով ածում են ափսեյի վրա:



Նկ. 11. Կարկած:

Ափսեն ծածկում են թաց շորով և դնում են տաք տեղ: Այստեղ սերմերը պետք է պահել յերեք որ, մինչև վոր յերևան կգան ծիլերը: Հենց վոր բողբոջները հայտնվեցին, իսկույն պետք է ցանել սերմերը: Յեթե թողնենք, վոր ծիլերը աճեն, նրանք կկո-

տրավեն և սերմերը կվոջնչանան:

Տաք տեղում ափսեյի վրա սերմերը պետք է պահել թաց: Հենց վոր նրանք սկսեն չորանալ, պետք է ջուր սրսկել նրանց վրա: Եորը, վորով ծածկվում են սերմերը, նույնպես պետք է թրջել, իսկ ափսեյի մեջ, վորտեղ սերմերն են ընկած, ջուր չպետք է լինի: Սերմերի աճման համար ող է հարկավոր, իսկ ջուրը դրան կխանգարի:

Սերմերը ափսեյի վրա պետք է նաև «քամուն տալ»: Դրա համար որվա մեջ յերեք անգամ խառնում են սերմերը ձեռքով կամ փոքրիկ թիյով:

Մարզերի ցանքսը պետք է շարքավոր լինի: Յեթե ցաք ու ցրիվ լինի ցանքսը, այն ժամանակ բողբոջ-

ները և ապա նաև բանջարեղենը վատ տեսակի կլինին: Բացի այդ, ցաք ու ցրիվ ցանած մարզերը խնամելը ավելի դժվար է, քան շարքավոր ցանքսը:

Ցանելուց առաջ մարզերը պիտի հարթել յերկաթե փոցխով, վորպեսզի նրանց վրա փոսեր կամ խոչեր չլինեն: Մարզերի վրայից պիտի մաքրել բոլոր անպետք խոտերը:

Շարքավոր ցանքսի ժամանակ սերմերի ակոսիկները պետք է անցկացնել մարզերի և՛ լայնությամբ և՛ յերկարությամբ: Շարքերը լայնությամբ շինվում են գազարի, մաղղանոսի, ճակնդեղի և ստեպղինի (пастернак) համար:



Նկ. 12. Սպանաղ:

Այդ դեպքում աշնանը հեշտ կլինի հանել արմատները: Միսեռը, լոբին և բակլան հարկավոր է ցանել մարզերի յերկարությամբ: Վարունգը ցանում են և՛ լայնությամբ, և՛ յերկարությամբ: Բարձրացող լոբին, վորը հարկավոր է լինում կապել ցիցերից, դդումը, կարկածը, վարունգը, ձմերուկը և սեխը ցանում են բներով: Դրանց բները շինում են կանոնավոր շարքերով: Ամեն մի բնի մեջ դնում են յերեք սերմ: Ցանքսի համար ակոսիկներ անցկացնելը ավելի հարմար է բարակ թոկի ողնությամբ:

Խոշոր բանջարանոցներ ունեցող կոլխոզները պետք է բանջարանոցային սերմեր ցանելու համար ձեռք բերեն «պլանետ» կոչվող ցանիչներ: «Պլանետը» ցանում է շարքերով, վորոնք իրարուց հեռու յեն գտնվում 18 սանտիմետր (4 վերշոկ):

Յեթե ցանիչ չկա, այն ժամանակ սերմերը ցանում են ձեռքով: Բայց ավելի լավ է այսպես անել. ածել սերմերը շի-

ցրտերից չեն վտխենում: Բացի գրանից, այդ բույսերի սերմերը յերկար ժամանակ են պահպանվում ծլելու համար: Յեթե պատահում է, վոր բանջարանոցը ուշ են ցանում, այն ժամանակ այդպես յերկար ծլող սերմերը թրջում են կամ ուղղակի ծլեցնում են ջրի մեջ: Դրանով նրանք ավելի շուտ են ծլում:

Թրջում են այս ձևով. սերմերը կապում են շորի կտորի մեջ և կես որով գցում են ջրի մեջ, այնուհետև հանում են ջրից և բարակ շերտով ածում են օփսեյի վրա:



Նկ. 11. Կարկած:

տրտվեն և սերմերը կվոչնչանան:

Տաք տեղում օփսեյի վրա սերմերը պետք է պահել թաց: Հենց վոր նրանք սկսեն չորանալ, պետք է ջուր սրսկել նրանց վրա: Ծորը, վորով ծածկվում են սերմերը, նույնպես պետք է թրջել, իսկ օփսեյի մեջ, վորտեղ սերմերն են ընկած, ջուր չպետք է լինի: Սերմերի աճման համար ող է հարկավոր, իսկ ջուրը դրան կխանգարի:

Սերմերը օփսեյի վրա պետք է նաև շրջամուռն տալ: Դրա համար որվա մեջ յերեք անգամ խառնում են սերմերը ձեռքով կամ փոքրիկ թիչով:

Մարգերի ցանքը պետք է շարքավոր լինի: Յեթե ցաք ու ցրիվ լինի ցանքը, այն ժամանակ բողբոջ-

ները և ապա նաև բանջարեղենը վատ տեսակի կլինին: Բացի այդ, ցաք ու ցրիվ ցանած մարգերը խնամելը ավելի դժվար է, քան շարքավոր ցանքը:

Ցանելուց առաջ մարգերը պլիտի հարթել յերկաթե փոցխով, վորպեսզի նրանց վրա փոսեր կամ խոչեր չլինեն: Մարգերի վրայից պլիտի մաքրել բոլոր անպետք խոտերը:

Շարքավոր ցանքի ժամանակ սերմերի ակոսիկները պետք է անցկացնել մարգերի և՛ լայնությամբ և՛ յերկարությամբ: Շարքերը լայնությամբ շինվում են գազարի, մազախոտի, ճակնդեղի և ստեպղինի (пастернак) համար:



Նկ. 12. Սպանաղ:

Այդ դեպքում աշնանը հեշտ կլինի հանել արմատները:

Սիսեռը, լոբին և բակլան հարկավոր է ցանել մարգերի յերկարությամբ: Վարունգը ցանում են և՛ լայնությամբ, և՛ յերկարությամբ: Բարձրացող լոբին, վորը հարկավոր է լինում կապել ցիցերից, դղումը, կարկաժը, վարունգը, ձմերուկը և սեխը ցանում են բներով: Դրանց բները շինում են կանոնավոր շարքերով: Ամեն մի բնի մեջ դնում են յերեք սերմ: Ցանքի համար ակոսիկներ անցկացնելը ավելի հարմար է բարակ թփի ոգնությամբ:

Խոշոր բանջարանոցներ ունեցող կոլխոզները պետք է բանջարանոցային սերմեր ցանելու համար ձեռք բերեն «պլանետ» կոչվող ցանիչներ: «Պլանետը» ցանում է շարքերով, վորոնք իրարուց հեռու յեն գտնվում 18 սանտիմետր (4 վերջոկ):

Յեթե ցանիչ չկա, այն ժամանակ սերմերը ցանում են ձեռքով: Բայց ավելի լավ է այսպես անել, ածել սերմերը շի-

մեջ, շքի բերանը ծածկել խցանով, իսկ խցանի մեջ անցկացնել սաղի փետրից մի կտոր:

Այդ պարզ գործիքի ոգնությամբ կարելի յե ալելի համաչափ ցանքս անել, քան ձեռքով: Սերմ ել ալելի քիչ կզնա:

Ակոսիկները մեջ սերմերը ծածկում են փոցիսի հակառակ կողմով: Ակոսիկները ծածկում են լղձած և փխրուն հողով: Մարգերում սերմերը պիտի ծածկել հողի բարակ շերտով, մանավանդ այնպիսի մանր սերմերը, ինչպես մաղդանոսինն է, ստեպղինինը և գաղարինը:

Յեթե հողը չոր է, ցանքսից հետո պետք է ջրել: Ծիլ հանած սերմերի ցանքսը պիտի ջրել նաև այն ժամանակ, յերբ հողը խոնավ է:

### ԲԱՆՁԱՐԱՆՈՅԱՅԻՆ ՍԵՐՄԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՓՈՐՁԵԼ, ԹԵ ՊԵՏՔԱԿԱՆ ԵՆ

Բանջարանոցային զանազան տեսակ բույսերի սերմերը պահպանվում են զանազան տարիների ընթացքում: Վարունգի սերմերը կարող են մնալ սասը տարի և չեն կորցնի իրենց ջանելու ընդունակութունը:

Իսկ պոմիդորի, սոխի, լոբու, սիսեռի և մաղդանոսի սերմերը յերեք տարուց հետո անպետք են դառնում:

Կաղամբի, ճակնդեղի, բողկի, կովակաղամբի, սելի և ձմերուկի սերմերը կորցնում են ջանելու ընդունակութունը հինգ տարուց հետո: Գաղարի սերմերը պիտանի յեն ցանքսի համար չորս տարի: Դդումի և կարկաժի սերմերը կարող են մնալ վեց տարի: Յեթե սերմերը գնվում են կողմնակի մարզկանցից և հայտնի չե, թե քանի տարի յեն նրանք ընկած մնացել, այդ դեպքում ցանքսից առաջ պետք է փորձել նրանց պետքականութունը:

Այդ փորձը կատարվում է հասարակ կերպով: Ամեն մի սերմից համրում են հարյուր հատիկ, ըստ վորում հա-

տիկները վերցնում են առանց ընտրության, և՛ լավերը, և՛ վատերը: Ապա մի արկղի կամ ափսեյի մեջ ածում են ավազ, վորը լավ ջրում են, հետո թափում են նրա վրա համրած հատիկները, արկղը կամ ափսեն ծածկում են շորով և դնում են մի տաք տեղ:

Մի ափսեյի մեջ կարելի յե ածել միայն մի տեսակի սերմահատիկ: Յեթե ափսեյի ավազը սկսի չորանալ, պետք է ազ ջրել գոլ ջրով: Յերբ սերմերը սկսում են բողբոջել, այդ բողբոջները ընտրում են և հաշվեգրում, թե վորքանն է ծիլ տվել: Ափսեյի մեջ մնացած սերմերը, վորոնք յերկար ժամանակ չեն ծլում, — անպետք են:

Յեթե հարյուր սերմից ծիլ է տալիս 80-ը, նշանակում է, վոր սերմերը լավն են, թարմ են, իսկ յեթե հարյուրից ծիլ է տալիս 40-ից, նույնիսկ 60-ից պակաս սերմ, — նշանակում է, վոր սերմերը վատն են, հնացած են:

Հին սերմերը պետք է փոխարինել նորերով:

Մաղդանոսի, ստեպղինի և սպանաղի սերմերը համարվում են լավ, յեթե հարյուրից 60-ը, նույնիսկ 50-ը ծիլ է տալիս: Սամիթի սերմերը լավ են համարվում, յեթե հարյուրից ծիլ է տալիս 40-ը:

### ԻՆՉՔԱՆ ԲԱՆՁԱՐԱՆՈՅԱՅԻՆ ՍԵՐՄ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՄԻ ՇԵԿՏԱՐԻՆ

Բանջարանոցի մի հեկտարի համար պահանջվում է զանազան ջանակությամբ սերմեր՝ նայած, թե ինչ սերմեր են: Վարը մենք ցույց ենք տալիս, թե ամեն մի սերմից ինչքան է պահանջվում մի հեկտար ցանելու համար:



Նկ. 13. Սալաթ:



Նկ. 14. Սևամի կաղամբ: (Կոլոլոբի)

**ԲԱՆՉԱՐԱՆՈՅՆԵՐԻ ԽՆԱՍՔԸ**


Լավ կլինամես բարձրանոցը, լավ ել բերք կստանաս: Վատ խնամքը լավ բերք չի տա: Վերցնենք կարտոֆիլը:



Նկ. 15. Արմատային սեկորեի:

Գյուղական դաշտերում վատ խնամք լինելու պատճառով մի հեկտարից ստացվում է ամենաշատը 200 ցենտներ կարտոֆիլ: Այն ինչ լավ խնամք տանելու դեպքում

կարելի չե ստանալ մի հեկտարից մինչև 700 ցենտներ կարտոֆիլ: Սա նշանակում է, վոր բանջարանոցի խնամքի համար գործադրվող աշխատանքը իր ուր չի կորչում:



Նկ. 16. Գլուխ սոխ:

Ամենից առաջ պետք է հետևել, վոր բանջարանոցի հողը շատ չչորանա: Յեթն զի անձրևներ են լինում, պետք է բանջարանոցը ջրել: Առանձնապես պետք է հետևել մատաղ բույսերին: Յերաշտ ժամանակ հարկավոր է ջրել ամիսը յերկու անգամ: Յեթն բանջարանոցը ջրվի ցերեկով, շուրը շուտով կգոլորչիանա: Մանավանդ պետք է ջրել կաղամբի և պոմիդորի ցանել բույսերը:



Նկ. 17. Բակլա:

Վորպեսզի դատարկ տեղեր չմնան, բանջարեղեն պետք է ցանել ավելի, քան կարող են բանել: Յերբ ծիլերը ամրանան մարգերում,

նրանց հարկավոր ե ցնցել, իրարից հեռացնել: Սա պետք է անել վոչ միանգամից, այլ աստիճանաբար: Առաջին անգամ պոկում են բույսերը միայն այնտեղ, վորտեղ նրանք չափազանց խիտ են աճում: Յերբ բույսերը լավ պնդեն, նրանց կարելի յե վերջնականապես հեռացնել իրարից:



Նկ. 18. Կանաչ սոխ:

Անպետք խոտեր բանջարանոցում ամենեին չպետք է լինեն: Նրանք խեղդում են բանջարանոցային բույսերը և հողից ստացվող սնունդը խլում են նրանցից: Անպետք խոտերը հարկավոր ե հանել ձեռքով կամ արմատից խորը կտրել մկրատով:

Հարկավոր ե հետևել, վոր բանջարանոցի հողը ամբողջ ժամանակփխրուն լինի: Այդ տեսակ հողը ավելի լավ ե պահպանում ջրահյութը Բանջարանոցի հողը փխրեցնել

հարկավոր ե բրիչով: Բանջարանոցային հողը կարելի յե հերկել ձեռքի ահոսավոր «պլանետով»: Այն բանջարեղենների շարքամեջերը, վորոնք իրարից հեռու յեն գրանվում, ինչպես ձմերուկը և կաղամբը, կարելի յե մշակել ձիյակիբ ահոսավոր գործիքով:

### ԻՆՉ ԲՈՒՅԱԵՐ ՊԵՏՔ Ե ՏՆԿԵԼ ԲԱՆՋԱՐԱՆՈՑՈՒՍ

Գլխավոր բանջարեղենները, վորոնք առանձնապես հարկավոր են անողի համար և բնուում են ՆՍՀ Միության բոլոր ռայոններում, հետևյալներն են. կաղամբ, գազար, ձակնդեղ, պոմիդոր, վարունգ, գլուխ սոխ, սխեռ և ուսսական բակլա: Հետևաբար առաջին հերթին պետք ե դրանք տնկել: Բայց հարկավոր ե բուսցնել ուրիշ բան-

ջարեղեններ ևս, ինչպես որինակ, բողկ, ռեզիսկա, սալաթ, սոլանադ, դդում, կարկաժ, լոբի և այլն:



Նկ. 19. Լավ մշակած բուստանը լավ բերք ե տալիս:

Բանջարանոցային յուրաքանչյուր բույս դարգանում ե իրատեսակ, այդ պատճառով ել մի բանիսը դրանցից

կարելի յե տնկել ավելի խիտ, մյուսները ավելի նոսր: Վոմանք սիրում են աղբային թարմ պարարտացումն, մյուսները չեն սիրում:

Լավ բերք ստանալու համար հարկավոր ե իմանալ, թե ինչպես պետք ե աճեցնել այս կամ այն բանջարեղենը: Ամեն մի նոր բանջարեղեն ցանելուց առաջ պետք ե խորհրդակցել տեղական գյուղատնտեսի հետ: Կարելի յե կարգալ նաև գրքույկներ, վորոնց մեջ խոսվում ե այն մասին, թե ինչպես պետք ե աճեցնել զանազան բանջարանոցային բույսերը:

Բանջարանոցային բույսերի անունները	Ինչքան սերմ ե հարկավոր մի հեկտարի համար
Ձմերուկ . . . . .	2 կիլոգրամ
Բադրձան . . . . .	1 " "
Բանջարանոցային բակլա . . . . .	2 ցենտներ
Կովակաղամբ . . . . .	600 գրամ
Բանջարանոցային սխեռ . . . . .	կես ցենտներ
Սեխ . . . . .	2 կիլոգրամ
Հասարակ կաղամբ . . . . .	600 գրամ
Ծաղկավոր կաղամբ . . . . .	600 "
Սիամի կաղամբ . . . . .	600 "
Կարկաժ . . . . .	1 կիլոգրամ
Գլուխ սոխ . . . . .	10 "
Կանաչ սոխ . . . . .	5 "
Գաղար . . . . .	5 "
Վարունգ . . . . .	5 "
Կարմիր պղպեղ . . . . .	1 "
Սաեպղին . . . . .	5 "
Արմատավոր մաղղանոս . . . . .	4 <sup>1</sup> / <sub>2</sub> "
Բողի . . . . .	3 "
Շաղգամ . . . . .	2 "
Ռեդիսկա . . . . .	5 "
Սալաթ . . . . .	3 "
Ճակնդեղ . . . . .	16 "
Պամիդոր . . . . .	400 "
Դդում . . . . .	2 կիլոգրամ
Սամիթ . . . . .	3 "
Լաբի . . . . .	1 ցենտներ
Սպանաղ . . . . .	կես ցենտներ
Թրթնջուկ . . . . .	5 կիլոգրամ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Ի՞նչ են տալիս բանջարանոցները կոլխոզներին . . . . .	3
2. Ի՞նչքան հող պետք է հատկացնել բանջարանոցներին . . . . .	4
3. Կարելի՞ յե ամեն տեղ բանջարանոց ունենալ . . . . .	5
4. Բանջարանոցի տեղի ընտրությունը . . . . .	8
5. Բանջարանոցի համար հող նախապատրաստելը . . . . .	11
6. Բանջարանոցը պարարտացնելու յեղանակը . . . . .	12
7. Ի՞նչպես վարել բանջարանոցային տնտեսությունը . . . . .	15
8. Ի՞նչպես են շինվում ջերմոցները . . . . .	17
9. Ցանքսը ջերմոցում . . . . .	21
10. Բույսերի խնամքը . . . . .	22
11. Սերմերի ցանքսը բանջարանոցում . . . . .	25
12. Ինչպես փորձել թե պետքակուն են բանջարանոցային սերմերը . . . . .	28
13. Ի՞նչքան բանջարանոցային սերմ է հարկավոր ժի հեկտարին . . . . .	29
14. Բանջարանոցների խնամքը . . . . .	30
15. Ի՞նչ բույսեր պետք է տնկել բանջարանոցում . . . . .	32



10 400.

5071



---

---

А. КОРОСТЕЛЕВ

Устраивайте огороды  
в колхозах

(Перевод с русского)

---

---

На армянском языке

---

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10